ՔԵԹԻ

Ժամանակակից Քեթի գյուղը հիմնադրվել է 1829թ. և սկզբնապես կոչվել Մեծ Քեթի: Գյուղի վաղագույն հուշարձաններն են մ.թ.ա. III-II հազարամյակների «Սղնախ» ամրոցը, «Հորներ», «Կրաքարի սար» բնակատեղիներն ու դամբարանադաշտերը: Այստեղ է գտնվում նաև մ.թ.ա. X-IV դդ. «Զորանոց» ամրոցը: Միջնադարյան հուշարձաններից գյուղում պահպանվել են տարբեր դարաշրջանների եկեղեցիների և մատուռների մնացորդներ ու գերեզմանոցներ:

Գյուղում կան բազմաթիվ մատուռ-սրբատեղեր, որոնցից մեկում գտնվում է վաղմիջնադարյան քառանիստ կոթողի երկու պատվանդան՝ շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչերով ու բուսական զարդաքանդակներով: Բնակիչներից մեկի բակում կառուցված մատուռի մուտքի մոտ է գտնվում ռուսաց Նիկոլայ I կայսեր անվանակիր մի քար:

183*. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. Սահակյան Գևորգի բակում կառուցված մատուռի մուտքի դիմաց, 4 տող.

Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԿԱՅՍ/ԵՐԼՈՒՅԹԵԼԱՆ
ԸՌՈՒՍԼԱՅՑ / ՆԻԿՈԼԱ ՊԱՎԼՈ/ՎԻՉԻ, 1842:

Ծանոթ. *Գյուղի V դ. եկեղեցին վերակառուցվել է 1842թ.՝ ռուսաց Նիկոլայ I կայսեր օրոք: Վիմագիրն, ըստ էության, այս իրողության քարեղեն ապացույցն է:*